

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«12» հոկտեմբերի 2017թ.

No 2931 – Ա

«ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ
ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ», «ՄԻԱՎ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՐՅԱՆ
ՆՄՈՒՇԱՌՄԱՆ, ՄՇԱԿՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ», «ՄԻԱՎ-Ի
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ», «ՀՂԻՆԵՐԻ
ՇՐՋԱՆՈՒՄ ՄԻԱՎ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ» ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին»
Հայաստանի Հանրապետության 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի 19-րդ
հոդվածի «ժ», 19.3-րդ հոդվածի 11-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության
կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշման Հավելված 1-ով
հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության
կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Հաստատել.

1. «Բժշկական կազմակերպություններում ՄԻԱՎ վարակի հայտնաբերմանն ուղղված
հետազոտության և խորհրդատվության իրականացման ընթացակարգը»՝
համաձայն հավելված 1-ի,
2. «ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության համար արյան նմուշառման, մշակման,
պահպանման և տեղափոխման ընթացակարգը»՝ համաձայն հավելված 2-ի,
3. «ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների իրականացման ընթացակարգը»՝
համաձայն հավելված 3-ի,
4. «Հղինների շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության և խորհրդատ-
վության տրամադրման ընթացակարգը»՝ համաձայն հավելված 4-ի:

Լ.ԱԼԹՈՒՆՅԱՆ